ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ «ԳԱՆՁԱՐԱՆ ՀԱՅ ՀԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 2 ապրիլի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր հովանավորությամբ և հունահայ բարերարներ տեր և տիկին Վարուժան և Անժել Գնունիների մեկենասությամբ վերջերս «Հայագիտակ» հրատարակչությունը լույս է ընծայել «Գանձարան հայ հին բանաստեղծության» գիրքը՝ նվիրված քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյա հոբելյանին:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ գրքի շնորհանդեսը:

Գրքում ներկայացված է հայ հնագույն և միջնադարյան բանաստեղծության ընտրանին՝ Պողոս Խաչատրյանի աշխատասիրությամբ, որին իր մասնակցությունն է բերել նաև Վարդան Դևրիկյանը: Նյութի ընգրկման առումով գիրքն ամենահարուստն է ցայսօր եղած նմանատիպ հրատարակությունների մեջ: Նախամաշտոցյան շրջանի բանահյուսությունից մինչև Սայաթ-Նովա ձգվող հայ բանաստեղծության շարքում նշանակալի տեղ է հատկացված նաև հոգևոր-եկեղեցական քնարերգությանը:

Գրքի հրապարակմամբ ազդարարվում է «Գիր» մատենաշարի ծնունդը, որի հրատարակչական խորհրդի նախագահ Հրանտ Մաթևոսյանն իր երախտագիտությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ «պաշտելի ու երկրպագելի» ժողովածուի հովանավորության համար: Իր երախտագիտությունը հայտնեց նաև մեծավաստակ գիտնական Պողոս Խաչատրյանը:

Երեկոյի ավարտին Նորին Սրբությունը իր գնահատանքն ու օրհնությունը տվեց Պ. Խաչատրյանին և բոլոր նրանց, ովքեր իրենց մասնակցությունն են ունեցել արժեքավոր հրատարակության լույսընծայմանը:

Ժողովածուն տպագրվել է 1000 օրինակ տպաքանակով, որի ոսկերիզ օրինակները գրքի հրատարակիչ Ալբերտ Իսոյանը նվիրեց Նորին Սրբությանն ու Հրանտ Մաթևոսյանին: